ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արթուր Սամվելի Գրիգորյան ԱՁ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/32 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
5	Պարային հենակներ (балетные/хореографические станки)՝ իր ամրիչներով (ոտիկներով) – 8.75 մետր + 4.4 մետր։ Փորձադահլիճում պարային, օգնական փորձաձողերը (հենակները) իրականացվում են Ø45-50 մմ փայտյա երկու զուգահեռ ձողերի օգնությամբ (հաճար կամ կաղնի), համապատասխանաբար գետնից 75 սմ և 110 սմ բարձրության վրա, որոնք հարակից պատից ունեն 25-30սմ հեռավորություն։ Փորձաձողերի համար օգտագործվող փայտերը կլինեն հարթ, ողորկ և առանց խութերի (փայտյա փշերի), կլինեն երկշերտ լաքապատված բարձրորակ, մաշակայուն լաքով՝ լաքի տեսակը կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ։ Փորձաձողերը բաղկացած են առնվազն 400 սմ երկարություն ունեցող ամբողջական կտորներից։ Երբ անհրաժեշտություն է առաջանում, որ երկու փայտյա ձող շարունակեն միմյանց, ապա իրար միացման կետը պետք է գտնվի ոտիկի ցիլինդրաձև օղակի մեջ։ Փորձաձողերը կունենան ուղղահայաց ոտիկներ յուրաքանչյուր 120-180 սմ հեռավորության վրա (հավասար հեռավորություններով), որոնք ձգվելու են հատակին (նախատեսվում է 7+4 հատ ոտիկներ)։ Ոտիկների տակ կլինեն քառակուսի, հատակի նկատմամբ հորիզոնական հարթակներ, չորս անցքերով, յուրաքանչյուր հարթակը՝ 10 սմ * 10 սմ չափսերով, պողպատյա թիթեղից, նվազագույնը 5 մմ հաստությամբ։ Ոտիկները փայտյա ձողերի համար ունեն առնվազն 55 մմ լայնության օղակներ (ցիլինդրաձև), որոնք ամուր ընդգրկում են փորձաձողը։ Յուրաքանչյուր օղակը հեղյուսով ամրացնում է փորձաձողը։ Հեղյուսները կունենան սնկաձև շապիկ՝ բացառելով վնասելու, քերծելու հնարավորությունը։ Ամեն ոտիկին միացված է ձող, որը միանում է պատին՝ հատակից որոշակի բարձրության վրա՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ։ Նշված ձողերի վերջավորության վրա պետք է լինեն

	քառակուսի, հատակի նկատմամբ ուղղահայաց հարթակներ, չորս անցքերով, յուրաքանչյուր հարթակը՝ 10 սմ * 10 սմ չափսերով, պողպատյա թիթեղից, նվազագույնը 5 մմ հաստությամբ, որոնք ամրացվում են հարակից պատին՝ հայելիներին չխանգարող բարձրության նիշով: Պողպատյա բոլոր ձողերը կլինեն Ø45-50 մմ սնամեջ պողպատյա խողովակներ, առնվազն 1.5 մմ հաստությամբ, բոլորը միացված լինեն միմյանց ամուր զոդման միջոցով, միացման կետերը մշակված լինեն հղկման միջոցով՝ չթուլացնելով կոնստրուկցիայի ամրությունը: Յուրաքանչյուր 10 սմ * 10 սմ հարթակի անկյունները կինեն կլորացված, մշակված հղկման միջոցով՝ բացառելով վնասելու, քերծելու հնարավորությունը: Պողպատյա թիթեղները միանում են հատակին (կամ պատին) առնվազն 10*120 մմ, մետաղական պտուտակ/դյուբելով: Պտուտակները պետք է չունենան սուր ծայրեր՝ բացառելով վնասելու, քերծելու հնարավորությունը: Փորձաձողի պողպատյա կոնստրուկցիաների արտաքին մակերեսները կլինեն մաքուր, հղկված, երկշերտ փոշեներկված բարձրորակ ներկով՝ ներկի տեսակը, գույնը և երանգը համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: Բոլոր նշված չափերի թույլատրելի շեղումը +-8%՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: Ապրանքները կլինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և/կամ հավաքումը իրականացվում է Մատակարարի կողմից իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Մատակարարը կշտկի տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ: Մատակարարման օրը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Артур Григорян ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/32 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
5	-